ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«_____» _____ 2024թ. **N _____Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արսեն Ամիրյան փողոցը՝ (սկսվում է Հանրապետության հրապարակից, հասնում՝ Սարյան փողոց) անվանափոխել Արցախյան ազատամարտի մասնակից, Արցախի հերոս, «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Աշոտ Ղուլյանի (Բեկոր Աշոտ) անվամբ՝ «Աշոտ Ղուլյան փողոց»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Ազգային առաջընթաց»
խմբակցության անդամ **Հայկ Գրիգորյան**

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՓՈՂՈՑ ԱՆՎԱՆԱՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Խորհրդային Միության փլուզումից հետո դրա կազմի մեջ մտնող գրեթե բոլոր հանրապետություններում տեղի ունեցան արժեհամակարգային փոփոխություններ: Արժեհամակարգային փոփոխությունը ու դրա հետ կապված պատմական և քաղաքական իրադարձությունների վերաարժևորումը բնականոն երևույթ են կյանքում:

1991 թվականի սեպտեմբերի 21-ին անկախություն ձեռք բերելուց հետո սկսվեց մի գործընթաց, որը նպատակ ուներ ազատվելու բոլշևիկյան ժամանակահատվածի «հերոսների» անուններով տեղանուններից, որոնք բացասական ազդեցություն են ունեցել Հայաստանի պետականության վրա, ակտիվորեն մասնակցել են ապազգային, հակապետական գործունեությանը՝ նպաստելով Հայաստանի առաջին անկախ պետության տապալմանը: Սակայն այդ գործընթացը կիսատ է մնացել և անհրաժեշտ է այն հասցնել տրամաբանական ավարտին: Ավելին, ամբողջ աշխարհում վաղուց սկսվել է ստալինյան բռնաճնշումների ժամանակահատվածի դատապարտման գործընթաց, որն ինքնին պետք է բացառի տվյալ ժամանակահատվածում ապազգային գործունեությամբ աչքի ընկած պետական պաշտոններ զբաղեցրածների անուններով փողոցների, դպրոցների, հրապարակների անվանակոչությունը:

Արսեն Ամիրյանը հայ բոլշևիկ է, ծնվել է 1881 թվականին, Բաքվում: 1910 թվականին Ամիրյանը դառել է Բոլշևիկյան կուսակցության անդամ: Մինչև 1917 թվականի փետրվարյան հեղափոխությունը Ամիրյանը Բաքվի պրոլետարիատի շրջանում քաղաքական և քարոզչական գործունեություն է ծավալել: 1917-1918 թվականներին խմբագրել է «Բակինսկի ռաբոչի» («Бакинский Рабочий») թերթը, որտեղ տպագրած հոդվածներով դիմել է Բաքվի աշխատավորությանը: Եղել է Բաքվի կոմունայի ղեկավար կազմում: Կոմունայի անկումից հետո (1918 թվականի հուլիսի 30) ձերբակալվել է և սեպտեմբերի 20-ին գնդակահարվել է Բաքվի 26 կոմիսարների հետ:

Բոլշևիկների կողմից Հայաստանի առաջին Հանրապետությունը տապալվեց:

Սերնդափոխությունը ենթադրում է քաղաքական հայացքների փոփոխություն, ու, ըստ այդմ, յուրաքանչյուր գործունեություն պետք է համապատասխանի տեղին, ժամանակին, ժողովրդի պահանջներին: Արցախի ազատագրական պայքարում Աշոտ Ղուլյանի (Բեկոր) ունեցած ներդրումը միանգամայն հիմնավորում է փողոցը նրա անունով վերանվանելու նախագիծը:

Արցախը «կենդանի» պահելու մի հյուլ էլ դա կլինի:

Սույն նախագծով առաջարկվում է անվանափոխել Արսեն Ամիրյանի անունը կրող փողոցը Արցախյան ազատամարտի մասնակից, ԼՂՀ Ստեփանակերտի առաջին վաշտի

հրամանատար, Արցախի հերոս, «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Աշոտ Ղուլյանի (Բեկոր Աշոտ, Ասկոլկա) անունով:

Աշոտ Ղուլյանը ծնվել է 1959 թվականի հոկտեմբերի 6-ին Բաքվում: Երիտասարդ տարիներին Բեկորը աշխատել է որպես դերձակ, շինարար, ավտովարորդ և փականագործ: Մարտական անունը Աշոտը ստացել էր դեռևս նախապատերազմյան շրջանում, երբ 5 հոգով Շահումյանից Ստեփանակերտ զենք էին տեղափոխում: 5 տղաներից 4-ի անունը Աշոտ էր և, որպեսզի խոսելիս միմյանց տարբերեն, որոշում են բոլորին մականուն տալ: Աշոտին, որն արդեն հասցրել էր ինքնաշեն զենքերը փորձարկելիս մի քանի բեկոր «վաստակել», անվանեցին Բեկոր (Ասկոլկա): Ամուսնացել է 1985 թվականին: Ունեցել է երեք որդի:

Բեկորը մասնակցել է Ղարաբաղում մղված մարտերից շատերին՝ Ասկերան, Հադրութ, Շահումյան, Կրկժան, Վերին Շեն, Բուզլուխ, Մանաշիդ, Մալիբեյլու, Խոջալու, Լեսնոյ, Քարինտակ, Շուշի, Լաչին, Մարտակերտ, Կուսապատ, Մաղավուզ, Սրխավենդ, Բաշ-Գյունեփայա, Օրթա-Գյունեփայա, Դրմբոն: Նրա հրամանատարությամբ բազմաթիվ բնակավայրեր են ազատագրվել:

1992 թվականին Շուշիի ռազմական գործողության ժամանակ առաջին վաշտը Բեկորի գլխավորությամբ առաջինն է մտնում քաղաք:

1992 թվականի օգոստոսի 24-ին Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղի ազատագրման համար մղված մարտը վերջինը եղավ Բեկորի համար:

1993 թվականին Աշոտ Ղուլյանը հետմահու արժանացել է ԼՂՀ «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանի: 1999 թվականին ԼՂՀ նախագահի հրամանագրով արժանացել է «Արցախի հերոս» բարձրագույն կոչմանը, պարգևատրվել է «Ոսկե արծիվ» շքանշանով: 2002 թվականին արժանացել է «Շուշիի ազատագրում» շքանշանի: Նրա անունով է կոչվում փողոց Շուշիում, ինչպես նաև Կենտրոնական պաշտպանական շրջանի առաջին մոտոհրաձգային գումարտակը: Բեկորի մարտական անունը կրում է նրա կրտսեր որդին, ով ծնվել է հոր զոհվելուց հետո:

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 16-րդ կետն առաջարկվում է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արսեն Ամիրյան փողոցն անվանափոխել Արցախյան ազատամարտի մասնակից, Արցախի հերոս, «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր Աշոտ Ղուլյանի անվամբ՝ «Աշոտ Ղուլյան փողոց»:

Բարձր գնահատելով Բաքվի կոմունայի մասնակցությունը թուրքական հարձակումից Բաքվի հայության ինքնապաշպանության կազմակերպման գործում՝ այնուամենայնիվ, կարծում ենք, որ Արսեն Ամիրյանի ներդրումը (դերը, վաստակը) 20-րդ դարի հայ հասարակական, քաղաքական, մշակութային, և առավել ևս ազգային պետականաշինության ասպարեզում բավարար չէ մայրաքաղաքի առանցքային փողոցներից մեկն իր անունով կոչելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը և Աշոտ Ղուլյանի մեծ համբավն ու ունեցած վաստակը Արցախի ազատագրության գործում, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական

ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման հավելվածով սահմանված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

«Ազգային առաջընթաց»
խմբակցության անդամ **Հայկ Գրիգորյան**